

Թ Շ Ո Ւ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Ըստ լեզուականութեան և վերջ. տես թիւ 11.)

Արդէն խոստովանեցանք թէ կայ պատերազմ մը, որուն հետեւում թիւնն ոչ թէ թշուառութիւն է, այլ կեանք, փառք և երջանկութիւն, այս պատերազմը անգէն և անարիւն է:

Հայոց ազգը թշուառ է. ինչու. — Ասան ղի անոր անդամները դեռ չեն զգացած (բացառութեամբ խօսելով) այս պատերազմիս հարկը, որ ղերենք պարտուց կ'ենթարկէ:

Արն է այս պարտքը. — չխատու թիւն և զոհողութիւն, որ ազգաց կենդանութեան գլխաւոր պայմաններն են:

Տգէտք անգամ գիտեն որ գործը պատճառէն յառաջ չըկրնար ընթանալ, և ոչ այլ արտադրեալ մը՝ առանց արտադրիչներու կրնայ գոյանալ:

$2 \times 2 = 4$ Ի հաւասար ըլլալը որքան ճշմարիտ և անայլայլելի է, այնքան ճշմարիտ է նաև թէ աշխատութիւնն ու զոհողութիւնը ծնունդ և արգասիք են սիրոյ և միութեան:

Ահ, սէր և միութիւն, այս է ճշմարիտ լուսաւորութեան նշանաբանը, և կենդանացուցիչ պատերազմին զօրաւոր զէնքը:

Հայերը չեն պատերազմիր, ուստի չեն յառաջանար. չեն պատերազմիր, վասն ղի միացեալ չեն, վասն ղի պիտի պարտին, վասն ղի զօրութիւնը միութեան մէջ է:

Հայերը յաղթութեան համար չեն զոհեր. վասն ղի սէր չունին, վասն ղի զոհողութիւնը ՚ի սիրոյ յառաջ կուգայ:

Հայերը չունին ինչ զոհելու. —

վասն ղի անգործ են, վասն ղի գործունէութիւնը հարստութեանց աղբիւրն է:

Անգործութիւնը ստիպած է զհայերը լռել: Առել արդարութեան, ճշմարտութեան և իրաւանց, կարճ խօսքով կենաց թշնամոյն դէմ:

Այլ է այս թշնամին. — Այն իսկ ինքն անգործութիւնն է:

Ամենէն յառաջ պարտաւոր ենք այս թշնամոյն յաղթել:

Իրաւունք ըսինք, էհ, գիտէք, Հայեր, որքան մեծ է այս բառինը շանակութիւնը: Թէպէտ և շատ յիշուած է այս բառը, բայց ինչ ընենք որ ամեն տեղ առջեւնիս կ'եղէ, և դժբաղդաբար լրագիրք միշտ ասոր բռնաբարութիւնը կը գուժեն:

Ահ, այս բառիս համար պատեւրազմելով մեռնիլը՝ սրբան քաղցր և որքան բերկրալի է. սակայն մինչ ցարդ իրաւանց բռնաբարութեան վրայ արտասուալից յողաւածներ միայն կրկարդանք, իսկ անոր դարմանին վրայ ոչ որ կը խօսի. միշտ լռութիւն. ահա մենք ալ կը լռենք:

Անից թ կեանքը՝ Փաղարիսի հրացեալ ցրոյն տանջանքէն աւելի անտանելի է:

Այս համեմատութիւնը ըրէ ամբողջ ազգի մը համար ալ, տես թէ մահէն աւելի դառնագոյն չե՞ս գըտներ անոր կեանքը:

Հայեր, Սիրակուսայ բռնաւորին երջանկութիւնը նախամեծար չը համարինք, զգանք մենք ալ թէ վտանգը մօտալուտ է: Սոսկալի վիճակ:

Գիտնանք, Հայեր, գիտնանք թշուառ ենք. ղի այս ալ մեծ և կարեւոր գիտութիւն մը է:

Հայեր, յուսմիք, որ մենք այսպէս անգործ կեանք վարելէն ղկնի, մեր որդիքն ու թոռուքը օւրիշ տե-

սակ կեանք կրնան վարել : Այ, ո՛չ,
այս անկարելի է, զի « Որդիք հարա-
զատք զնմանութիւն հարցն բերեն »
և իրաւունք ունին :

Կ'ըսեն թէ խաչափառը իր զաւա-
կին օր մը կ'ըսէ թէ, « Որդեակ, ու-
ղիղ չես քալեր »: Տես թէ այն ինչ
կ'ըսէ. — կը քալեմ, կ'ըսէ, հայր,
ինչպէս կը տեսնեմ որ դու կը քալես :

Հայեր, խօսքերու բաղմութիւ-
նը չէ խօսք, այլ սրտէ ճշմարիտ հայ-
ու սրտէ բղխած մի խօսքը պիտի կրը-
նայ Հայոց զգայուն սրտերը շարժել :
Ուրեմն մենք ալ կորենք խօսքերնիս
յայտնելով որ այս փոքրիկ խորհրդա-
ծութեանս եղբակացութիւնն է ցու-

ցընել մեր այժմեան թշուառ կենաց
վտանգի մէջ ըլլալը, և զայն նորատե-
սակ, բայց երջանիկ կենաց մը փո-
խելու հարկաւորութիւնը զգացունել :

Այն որ կըզգայ և կը շարժի՝ կ'ապ-
րի. բայց այս կեանքը՝ անասնոց յատ-
կացեալ է. զի նոքա եւս կըզգան, կը
շարժին, և հետեւապէս կ'ապրին :
Խորհրդով և լաւ շարժիլը՝ կեանք է,
և ճիշտ այս է մարդկան յատկացած
կեանքը :

Վիտնալ, զգալ, խորհիլ, գործել
և լաւ ապրիլ, ահա ասոնք են բա-
նական կենդանւոյն երջանիկ կենաց
գեղեցիկ պայմանները :

Ս. ՍԷՐԷԼ. Տ.

Ա. Ռ. ՀԱՅԱՍՏԱՆ

Այդ ձեռն ի կատար սրբանուէր սրբոյ լերինն Ձիթենի
Յոր աստուածեանն հանգեալ երբեմն փառացն սուրբ հովանի,
Ուր Անմահին եւ ծաւալեալ սիրոյն շնորհ կենսաբուղիս
Հէգ մահացուաց տայր միմեջեւ ի ձայն անոյշ զօրհնից ուղիս :

(Օրհնեալ Տէր եւ մեր Հայր
Օրհնեալ նա յամս յամայր,
Ալէլուբ օրհնութեան
Նմա, մինչ յաւիտեան :

Անդ ձեռն ի ճնօտ գլխիկն ի կախ նստեալ ի կողմ սուրբ լերին
Յոգւոց հանէր ի խոր սրտէն Հայաստանցի հէք որդին,
Ի ածեալ ի յուշ նախնի զփառս իւր հայրենեացն Հայաստան
Անոյր զլայրըն յերգ սրտառուչ նորայն պանդուխտ սիրտ Հայկեան :

Եւ աչկունքն ի յեթեր
Եւ սիրտն ի յերեր,
Ասէր, եւ Փրկիչդ, յայց
Յաւերս մեր հայրենեաց :

Անգանօր եւ շիթա արտասուաց հեղոր իւր աչք ցօղագին
Չնուիրականն թանայր զհօղ, կրկնեալ եւ զայս ծունկ ի գետին,
Փրկիչդ ազգաց, մոռացա՛ր ահ, զհայրենիս մեր Հայաստան